ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ԿԵԱԿ-ՀՄԱ-ԾՁԲ-19/5-ՄՇ>> ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման նիստի

ք.Երևան 26 սեպտեմբերի 2019թ.

ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Գ.Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լ.Կոստանդյան
	Օ.Ղազարյան
Գնումները համակարգող՝	Է.Գրիգորյան

1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>

(Գ.Սարգսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. <u>Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին</u>

(Գ.Սարգսյան)

Ընդունել ի գիտություն, որ համաձայն 25.09.2019 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորություններ չունի: Ուստի առաջնորդվելով 4 մայիսի 2017թ.ՀՀ Կառավարության 526-ն որոշման 44-րդ կետի պահանջով՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ Էդուարդ Լևանյանին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. <u>Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին</u>

(Գ.Սարգսյան)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

ProTender©
www.protender.am